ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

3301 ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ.՝ +374 60517830, 028544296 , էլ-փոստ՝ syunik@mta.gov.am

«20» հոկտեմբերի 2017թ. № 03/7291-17
Ձեր՝ 2017թ. №

« ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ » ՍՊԸ
տնօրեն պարոն Ա. Հարությունյանին
ք.Երևան Բակունցի փ.4 35

Հարգելի պարոն Ա. Հարությունյան

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի (այսուհետ՝Պատվիրատու) և <<ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 02.05.2017 թվականին կնքված ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/2/2 ծածկագրով պայմանգրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կատարողն պարտավորվում է կատարել սույն պայմանագրի N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սիսիան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքները և վարձատրել դրա համար: Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ սույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի տեխ.բնութագրին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն նախատեսված առանձին աշխատանքների փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացույցային գրաֆիկով (Հավելված 2): Պայմանագրով սահմանված թիվ 2 հավելվածի օրացույցային գրաֆիկի համաձայն՝ Պայմանագրի 1-ին չափաբաժնի աշխատանքների կատարման ավարտը սահմանվել էր մինչև 30.09.2017 թվականը: Սակայն 30.09.2017 թվականի դրությամբ <<ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ>> ՍՊԸ-ի կողմից չի իրականացվել նախատեսված աշխատանքները:

Հաշվի առնելով աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկից շեղումը Պայմանագրի 8.5 կետի համաձայն Կատարողին օրացույցային գրաֆիկի ավարտի օրը առաջարկվել է ստորագրել Պայմանագիրը երկարաձգելու համաձայնագիր 15 օրացույցային օր ժամկետով՝ աշխատանքները պատշաճ ավարտին հասցնելու նպատակով: Սակայն Կատարողը աշխատանքները չի ավարտել կնքված համաձայնագրի 2.1 կետով նախատեսված ժամկետներում:

Ղեկավարվելով ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/2/2 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետով ծանուցում եք Ձեզ, որ 2017 թվականի հոկտեմբերի 16-ից պայմանագրի 1-ին չափաբաժնին վերաբերվող մասը մասնակի համարվում է միակողմանի լուծված:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն ծանուցումը ստանալուց 5(հինգ) բանկային օրվա ընթացքում Դուք պարտավոր եք ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 147000 (մեկ հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ, ըստ Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքի:

Հարգանքով՝ **Ռ.Սարգսյան**

Կատարող՝ Ս. Դավթյան
Հեռ.՝ (0285) 44297
Էլ.փոստ՝ syunik.finans@mta.gov.am